



# Ը Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

2017թ. թիվ 29

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՌԱԿՈՂՄ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱ

Փետրվարի 10-ին կայացավ հանրապետական եռակողմ հանձնաժողովի հերթական նիստը: Նիստում հանրապետական հանձնաժողովի քննարկմանը ներկայացված օրակարգային հարցերից մեկը «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ներկայացումն ու քննարկումն էր, որը բխում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթներից և ամրագրված է ՀՀ կառավարության ծրագրում: Հայեցակարգն արժանացավ հանձնաժողովի հավանությանը: Օրենքի նախագիծը կներկայացվի ՀՀ Ազգային ժողով:

Օրակարգի երկրորդ հարցով հանձնաժողովին ներկայացվեց «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ մշակված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Նշվեց, որ նախագիծը բխում է ՀՀ կառավարության ծրագրից՝ աշխատանքային հարաբերությունների նոր, ճկուն հիմքերի ապահովման առումով, և չնայած նախագծի հեղինակները այն պայմանավորեցին նաև աշխատանքային հարաբերությունները միջազգային պայմանագրերին և ՀՀ Մահմանադրությանը համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ, սակայն իրականում նախագծի զգալի մասը բաղկացած է Աշխատանքային օրենսգրքի տրամաբանությանը հակասող, աշխատողի աշխատանքային պայմանները վատթարացնող դրույթներից: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքները կատարելու, ինչպես նաև գիշերային և արտաժամյա աշխատանքների համար աշխատողին վճարվող հավելման չափը նախագծով թողնվում է գործատուի և աշխատողի պայմանավորվածությանը: Նման փոփոխությունները և լրացումները հակասում են ոչ միայն Աշխատանքային օրենսգրքի բնույթին, այլև ՀՀ Մահմանադրության 28-րդ հոդվածին՝ «Բոլորը հավասար են օրենքի առջև» և 29-րդ հոդվածի՝ խտրականության արգելման սկզբունքին: Փաստորեն, այս հարաբերությունների կարգավորման հարցում պետությունը մի կողմ է քաշվում:

Արհմիությունների ներկայացուցիչների կարծիքով, որը ներկայացրեց ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Բ. Խարատյանը, խտրականություն է առաջանում ոչ միայն աշխատողների, այլ նաև գործատուների համար: Արհմիությունների կողմը անընդունելի համարեց նաև այն, որ նախագծով ուժը կորցրած է ճանաչվում աշխատավարձի ինդեքսավորման մասին հոդվածը, մանավանդ, որ հանրապետական եռակողմ պայմանագրով կողմերը պարտավորություն են ստանձնել փոխհամաձայնեցված մոտեցումներ ձևավորել աշխատավարձի ինդեքսավորման մեխանիզմների վերաբերյալ: Այսպիսով, արհմիությունը դեմ արտահայտվեց Աշխատանքային օրենսգրքի փոփոխությունները նման տեսքով օրինականացնելուն:

Հնչեցին նաև ՀՀ կառավարության և գործատուների հանրապետական միության ներկայացուցիչների կարծիքները օրենսգրքի նախագծի շուրջ:

Հարցի քննարկումը հետաձգվեց, կշարունակվի շահագրգիռ կողմերի եզրակացություններն ու վերլուծությունները ստանալուց հետո:

## ՀԱՅՈՒՀՈՒՆ

Միրելի արհմիութենական, ի սրտե շնորհավորում ենք Ձեզ  
գարնան գեղեցկագույն տոնի առիթով:

Վստահ եղեք, որ մեր միասնական, համատեղ ջանքերը արդյունաբեր ու որոշիչ են լինելու  
մեր հետագա աշխատանքում՝ արհմիության շարքային անդամի բարեկեցության, նրան  
արժանապատիվ աշխատանքով ապահովելու հանապազօրյա խնդիրների  
լուծման ճանապարհին:

Մաղթում ենք հաջողություն, առողջություն, առաջընթաց, կայունություն,  
վճռականություն, սեր, քնքշանք, գնահատվածություն,  
բարեկեցություն, արժանապատիվ աշխատավարձ՝  
խաղաղ ու ապահով երկինքի ներքո:

**Միրով՝ Անահիտ Ասատրյան**

### ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

Փետրվարի 20-21-ը Հայաստանում անցկացվեց Եվրոպայի հանրային ծառայությունների  
աշխատողների արհմիությունների դաշնության (ԵՀՄԱԱԴ) Հյուսիսարևելյան Եվրոպայի  
տարածաշրջանային տարեկան հանդիպումը:

Վրաստանից, Բելառուսից, Լատվիայից, Լիտվայից, Էստոնիայից, Ուկրաինայից Հայաստան  
ժամանած շուրջ երկու տասնյակ արհմիության ղեկավարների, այդ թվում՝ Հայաստանի, երկօրյա  
քննարկման թեմաները բազմաթիվ էին՝ տարածաշրջանում արհմիութենական խնդիրներից մինչև  
կազմակերպական հարցեր:

Նշենք, որ դաշնությունը համախմբում է Եվրոպայի հանրային ծառայությունների ոլորտի  
արհմիությունները՝ ներկայացնելով ոլորտի ճակն. աշխատողների շահերը: Հայաստանի  
արհմիություններից դաշնության կազմում են հանրային ծառայությունների ոլորտի շուրջ 40000  
արհմիության անդամներ միավորող Հայաստանի պետական հիմնարկների, տեղական  
ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների, Հայաստանի  
առողջապահության աշխատողների, Հայաստանի կոմունալ-բնակարանային տնտեսության և  
ծառայությունների ոլորտի ճյուղային հանրապետական արհմիությունները:

Հայաստանում կազմակերպված հանդիպման մասնակիցներին ողջույնի խոսքեր հղեց  
Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Է. Թումայանը: ՀԱՄԿ-ի նախագահը  
ներկայացրեց վերջին տարում մեր հանրապետությունում կատարված նշանակալի  
իրադարձությունները, Հայաստանի արհմիությունների ներկա կարգավիճակը, խնդիրներն ու տարվող  
աշխատանքները:

ԵՀՄԱԱԴ գլխավոր քարտուղար Յան Վիլլեմ Գաուդրիասանն իր ելույթում ներկայացրեց  
դաշնության առաջիկա ծրագրերը՝ մասնավորապես 2017թ. աշխատանքային պլանը, հանրային  
ծառայությունների ինտեռնացիոնալի համագումարի անցկացման, համագումարին մասնակցության,  
կանոնադրական փոփոխությունների և կազմակերպական այլ հարցեր:

Մասնակից երկրների արհմիության ղեկավարներն ըստ օրակարգի ներկայացրին իրենց  
երկրներում արհմիության խնդիրները՝ կապված արհմիության իրավունքների, սոցիալական

երկխոսության, կոլեկտիվ պայմանագրային գործընթացի, սեփականաշնորհման և լիբերալիզացիայի հետ, ինչպես նաև իրականացված միջոցառումները:

Հայաստանի պետհիմնարկների հանրապետական արհմիության նախագահ Ա.Ասատրյանը հնչեցրեց մեր հանրապետության սոցիալ-տնտեսական ցուցանիշները, ներկայացրեց արհմիության խնդիրները հատկապես պետական հիմնարկներում: Խնդիրների մեջ Ա. Ասատրյանը հատկանշեց արհմիության անդամների նվազումը, ինչը արդյունք էր նաև նոր կառավարության որդեգրած քաղաքականության՝ օպտիմալացման, ինչպես նաև համայնքների խոշորացման հետևանքով բազմաթիվ պետական ու համայնքային ծառայողների կրճատումների: Բազմաթիվ խնդիրներ ի հայտ եկան նաև նախորդ տարվա ապրիլյան քառօրյա պատերազմից հետո, երբ հանրապետությունում ընդգծվեցին կոռուպցիայի, անարդյունավետ կառավարման, աղքատության, գործազրկության նման արատավոր երևույթներ: Հայաստանի պետհիմնարկների ճյուղային արհմիության նախագահն անդրադարձավ նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքում նախատեսվող փոփոխություններին, որոնցով շատ դեպքերում վատթարացվում են աշխատողի աշխատանքային պայմանները: Նախատեսվող փոփոխությունները քննարկվել են հանրապետական եռակողմ հանձնաժողովի օրերս կայացած նիստում, որտեղ արհմիության կողմը համապատասխան հիմնավորումներով դեմ է արտահայտվել նման փոփոխություններին:

Աշխատանքային օրենսգրքի նախատեսվող փոփոխություններին, արդեն կառավարության տեսանկյունից, անդրադարձավ նաև հրավիրված, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի բաժնի պետ Ժ. Սարգսյանը: Փոփոխությունների ներկայացումը լայն քննարկման արժանացավ տարբեր երկրների արհմիության նախագահների կողմից:

Զեկուցողն իր ելույթում կարևորեց նաև հանրապետական եռակողմ սոցիալական գործընկերությունը, ներկայացրեց նախարարության կողմից տարվող աշխատանքերը՝ բնակչության զբաղվածության խթանման, սոցիալական աջակցության ուղղությամբ և այլն:

Նախարարության ժողովրդագրության բաժնի պետ, արհմիության նախագահ Վ.Բաբաջանյանը մասնակիցներին ներկայացրեց մեր հանրապետության սոցիալական, ժողովրդագրական տվյալները:

ԵՀԾԱԱԴ հրավերով հանդիպմանը մասնակցում էր նաև Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Լ. Բաղայանը: Վերջինս իր ելույթում անդրադարձավ հիմնադրամ-արհմիություն հայաստանյան համագործակցությանը, առաջիկա ծրագրերին, ներկայացրեց նաև երիտասարդության շրջանում անցկացված սոցիալական լայնածավալ հետազոտության արդյունքները, որոնք, ինչ խոսք, մտահոգիչ են:

Երկօրյա հանդիպման ընթացքում տարբեր երկրների արհմիության նախագահները փորձի փոխանակման լայն հնարավորություն ունեցան:

Հանդիպումից դուրս մասնակիցները շրջայց կատարեցին Հայաստանի հոգևոր կենտրոնում՝ Էջմիածնի մայր տաճարում:

## ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԶԱԳԱՆՔԸ «ԱԶԳ-ԲԱՆԱԿ» ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻՆ

***Մինչ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի ընդունումը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի անդամ ճյուղային հանրապետական արհմիությունները հանդես են եկել սեփական տեսակետներով***

Օրենքը թեև հետապնդում է համազգային նպատակներ և ուղղված է զինծառայողների և նրանց ընտանիքների աջակցությանը, այդուհանդերձ, հանրության շրջանում տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք էր տվել, և քանի որ դրամական միջոցները պետք է ձևավորվեն աշխատող ֆիզիկական անձի աշխատավարձից, ուստի Հայաստանի աշխատողների շահերը

ներկայացնող արհմիությունները անմասն չմնացին սեփական տեսակետները հնչեցնելուց:

Օրենքի նախագծի առնչությամբ արհմիության ղեկավարների տեսակետներն ու առաջարկները տարբեր էին՝ խնդիրները ճիշտ չձևակերպելուց ու հանրությանը թափանցիկ չներկայացնելուց մինչև արհմիությունների հետ նախագիծը չքննարկելը, պետության խնդիրը աշխատողի վրա բարդելը, կամավորության սկզբունքը շրջանցելը, աշխատողների հանդեպ տարբերակված մոտեցում չցուցաբերելը, անվստահությունը հիմնադրամի ու առհասարակ պետության ձեռնարկած միջոցառումների հանդեպ:

Իսկ այն, որ նախագիծը քննության չէր առնվել աշխատողների շահերի պաշտպան հանդիսացող արհմիությունների հետ, կիսում են բոլոր արհմիությունները. չէ որ 1000 դրամները գանձվելու էին հենց աշխատողների աշխատավարձերից:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էդուարդ Թումայանը «Ազգ-բանակ» գաղափարը համարում է վեհ և հավելում, որ հայ ժողովրդի պատմությունը հարուստ է այդ գաղափարի բազում դրսևորումներով:

- Ժողովուրդը միշտ էլ սատար է եղել զինվորին, օրհասական պահին՝ առավել ևս: Ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում տեղի ունեցած ապրիլյան դեպքերը դրա վառ ապացույցն են, երբ համայն հայությունը սատար կանգնեց հայկական բանակին: Բայց այս վեհ գաղափարը դարձնել պարտադիր հարկատեսակ, նշանակում է արժեզրկել այն:

Հայտնի են ֆինանսական աղբյուրներ, որոնք կարելի է ուղղել նորաստեղծ հիմնադրամին, ինչո՞ւ չօգտագործել այդ հնարավորությունը, փոխարենը աշխատողին պարտադրվում է մի նոր հարկատեսակ: Կարծում եմ, կամավորության սկզբունքի կիրառմամբ ավելի շատ գումար կհավաքվի, քան պարտադրանքով գանձվող գումարները կարող են լինել: Աշխատողի աշխատավարձի գանձումը պետք է լինի կամավոր սկզբունքով և պետք է նկատի առնվի յուրաքանչյուրի աշխատավարձի չափը, չէ՞ որ կան նվազագույն, միջին և բավականին բարձր աշխատավարձ ստացողներ, արդար չէ նրանցից գանձել միևնույն գումարը:

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների հանրապետական արհմիության նախագահ Անահիտ Ասատրյանը փաստել է, որ աշխատանքային հարաբերություններին և աշխատողների շահերին վերաբերող ցանկացած հարց նախապես պետք է քննարկվի արհմիությունների հետ, ինչն այս դեպքում անտեսվել է:

«Միջին աշխատավարձ ստացող յուրաքանչյուր աշխատողի համար 1000 դրամը, կարծում եմ, իր բյուջեի համար էական փոփոխություն է: Սրանով խախտվում են թե՛ ՀՀ աշխատանքային օրենսգրքի և թե՛ հանրապետական կոլեկտիվ պայմանագրի դրույթները: Այս որոշումը աշխատանքային հարաբերություններում փոփոխություն է ենթադրում, որին ես դեմ եմ: Բացի դա, հանրության շրջանում առկա է անվստահությունը տարատեսակ հիմնադրամների գործունեության հանդեպ, պատճառը դարձյալ արդյունավետ և թափանցիկ կառավարման բացակայությունն է:

Հասկանում ենք, որ բանակին ամեն գնով աջակցել պետք է, սակայն շարքային աշխատողի աշխատավարձից 1000 դրամ գանձելը և այն էլ հարկադրաբար, նույնպես ճիշտ չէ, քանի որ կան գումարի հավաքագրման այլ աղբյուրներ: Աշխատողի սոցիալական ապահովագրությունը գործատուի պարտավորությունն է. զինձառայողների գործատուն պետությունն է, որն էլ իր միջոցներով, (իսկ դրանք գոյանում են նաև աշխատողների արդեն իսկ վճարած հարկերից), պետք է իրագործի այդ ապահովագրությունը, այլ ոչ թե նոր բեռ ավելացնի աշխատողների վրա», -նշվում էր պետհիմնարկների արհմիության նախագահի խոսքում:

Ինֆորմացիայի աղբյուր՝  
ՀԱՄԿ-ի կայք

## **ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԸ՝ ԱՄՖ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ**

2016 թվականի նոյեմբերի 24-ին Իսրայել պետության Երուսաղեմ քաղաքում անցկացվել է Պետական հիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհմիությունների միջազգային ֆեդերացիայի խորհրդի հերթական նիստը: Հայաստանի պետհիմնարկների արհմիությունը նիստում ներկայացնում էր ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ Աշոտ Ղազեյանը:

Նիստին մասնակցում էին նաև ԱՄՖ խորհրդի անդամներ ու ներկայացուցիչներ Իսրայելից, Ռուսաստանից, Ղազախստանից, Բելառուսից, Ադրբեջանից, Ղրղզստանից, Լատվիայից, Մոլդովայից:

Հյուրընկալող երկրի պետական ծառայողների արհմիության նախագահ Ա.Յակոբին զեկուցել է Իսրայելի արհմիության կառուցվածքի, մեթոդների և գործունեության հիմնական ուղղությունների մասին:

Օրակարգային հարցերի շրջանակում մասնակիցները ներկայացրել են 2016թ. մայիս-դեկտեմբեր ժամանակահատվածում ԱՄՖ անդամ արհմիությունների խնդիրները: Հայաստանի արհմիության ներկայացուցիչ Ա.Ղազեյանը առաջնահերթ է համարել ՀՀ վարչապետի կողմից պետական ոլորտում սկիզբ առած կրճատման գործընթացի մասին: Արհմիության նախագահը նշել է, որ Հայաստանի պետհիմնարկների հանրապետական արհմիության նախագահը կրճատման վտանգի առաջ հայտնված բազմաթիվ արհմիության անդամների մտահոգությունը գրությամբ հայտնել է կառավարության դեկավարին և առաջարկել է կազմակերպել հասարակական քննարկումներ արհմիությունների մասնակցությամբ, բազմակողմանիորեն վերլուծել աշխատողների կրճատումներից բխող բոլոր հնարավոր բացասական և դրական հետևանքները, որից հետո միայն իրավիճակին համապատասխան լուծում տալ:

Ի դեպ, մինչ այդ Հայաստանի պետհիմնարկների արհմիության նախագահը կրճատումների խնդրով դիմել էր ԱՄՖ նախագահին՝ խնդրելով ոչ միայն ֆեդերացիայի, այլ նաև ֆեդերացիայի անդամ արհմիությունների աջակցությունը, մասնավորապես՝ համապատասխան գրություններով դիմումները ՀՀ կառավարություն: (Կրճատումների վերաբերյալ գրագրության մասին առավել հանգամանորեն տես ՃՀՄ տեղեկագրի թիվ 27 համարում):

Նիստում ամփոփվել են անցնող տարվա աշխատանքային պլանի կատարումը, ֆեդերացիային վճարված անդամավճարները, սահմանվել է 2017թ.-ի աշխատանքային պլանը, ֆեդերացիային վճարվող անդամավճարների չափը՝ ըստ երկրների:

ԱՄՖ կանոնադրությամբ սահմանված կարգով խորհուրդը 2017-ի սեպտեմբեր ամսին հրավիրել է ԱՄՖ համագումար, պլանավորել է համագումարի, ինչպես նաև ԱՄՖ 25-ամյակին նվիրված միջոցառումները:

### **ՍԵՄԻՆԱՐ-ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ**

Դեկտեմբերի 3-4-ը Հայաստանի պետհիմնարկների ճյուղային հանրապետական միությունը Ծաղկաձորում կազմակերպել էր հանդիպում արհմիության խորհրդի անդամների և երիտասարդական թևի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հանդիպմանը մասնակիցները քննարկել են արհմիության արդի խնդիրները, մասնավորապես պետական հիմնարկներում ընթացող կրճատումների գործընթացը և պետական հիմնարկների արհմիության գործողությունները այդ ուղղությամբ: ՃՀՄ նախագահ Ա.Ասատրյանը նշել է, որ հանրապետական եռակողմ հանձնաժողովի վերջին նիստում իր կողմից առաջարկվել էր օրակարգում ընդգրկել կրճատումների վերաբերյալ հարց, որին ի պատասխան՝ հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա.Ասատրյանը նշել էր, որ աշխատողների կրճատման խնդիր ներկայում չկա, և պետական հիմնարկներին տրված հանձնարարականը

վերաբերում էր կառավարման համակարգի օպտիմալացմանը: ՃՀՄ նախագահը տեղեկացրել է նաև, որ կրճատումների շուրջ ՀՀ վարչապետ Կ.Կարապետյանին ուղղված գրության պատասխանը ևս նույն բովանդակությունն ուներ, որ ոչ թե աշխատողների կրճատման, այլ պետական կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու, կրկնվող գործառույթները վերացնելու, առկա բացերը վեր հանելու և լրացնելու խնդիր է դրված, որի արդյունքում հնարավոր կլինի ստանալ պետական կառավարման համակարգի այնպիսի կառուցվածք, ինչը թույլ կտա կառավարումը դարձնել առավել արդյունավետ:

Ա.Ասատրյանը տեղեկացրել է նաև, որ մեր հանրապետությունում ընթացող կրճատումներին արդեն իսկ արձագանքել են Եվրոպայի հանրային ծառայությունների արհմիությունների դաշնությունը, պետական հիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհմիությունների միջազգային ֆեդերացիան (որոնց անդամ է Հայաստանի պետհիմնարկների արհմիությունը), որոնք իրենց հերթին դիմել են ՀՀ վարչապետին: Արհմիությանը սատարելու խնդրանքով ՃՀՄ նախագահը դիմել էր նաև Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահին, հարակից ճյուղային արհմիությունների նախագահներին:

Արհմիության երիտասարդական թևի ներկայացուցիչներ Հայկ Կոչեցյանն ու Անժելա Ստեփանյանը հանդիպման մասնակիցների հետ կիսվել են նույնպես ամսին Գերմանիայի Հյուսիս-Հռենոսյան Վեստֆալիա նահանգ կատարած արհմիութենական ուսուցողական այցի մասին տեղեկատվությամբ:

Օգտվելով արհմիության նախագահների և անդամների հետ հանդիպման հնարավորությունից՝ ՃՀՄ նախագահն ընդգծել է տեղեկատվական աշխատանքի կարևորությունը արհմիության ամենօրյա աշխատանքում, քննարկվել են երիտասարդական թևի անելիքները, ներարհմութենական, կազմակերպչական մի շարք խնդիրներ:

Սեմինար-հանդիպումը համատեղվել է մասնակիցների մեկօրյա հանգստով:

## **ՖԷՀ-ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանային ղեկավարի՝ Յուլիա Բլեզիուսի՝ Հայաստանում աշխատանքը ավարտելու և Ֆելիքս Հեթի աշխատանքային մեկնարկի առիթով ղեկտեմբերի 7-ին ՃՀՄ նախագահ Ա.Ասատրյանը արհմիության գրասենյակում հանդիպում է ունեցել վերջիններիս հետ:

Հանդիպմանը քննարկվել են վերջին երեք տարիներին հիմնադրամի աջակցությամբ արհմիության իրականացրած ծրագրերը, համագործակցության հեռանկարները, արհմիության ներկա խնդիրները, դրանց ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները և այլ հարցեր:

ՃՀՄ նախագահը մասնակցել է նաև ոչ ֆորմալ մթնոլորտում հիմնադրամի կազմակերպած ընդունելությանը:



Հունվարի 24-ին «Անի» հյուրանոցում կայացավ ՖԷՀ հայաստանյան գրասենյակի իրականացրած «Անկախության սերունդ. հետազոտություն երիտասարդների շրջանում, Հայաստան 2016թ.» ուսումնասիրության արդյունքների ներկայացումը: Հետազոտության արդյունքների վերլուծությունը արտացոլում է երիտասարդ սերնդի ընկալումները, իրազեկվածությունը, սպասելիքներն ու մոտեցումները փոփոխվող իրողությունների վերաբերյալ: Հետազոտությունը մատնանշում է երիտասարդներին առնչվող մարտահրավերները և վեր հանում հասարակության ներսում առկա հրատապ խնդիրները: Նախագծի կարևորությունը ներկայացրեց նախաձեռնող Յուլիա Բլեզիուսը, հետազոտության շուրջ կարծիքներ հնչեցրին ՀՀ ԿԳ փոխնախարար Կարինե Հարությունյանը, ԵՊՀ-ի, ՀԿ-ների ներկայացուցիչներ:

Միջոցառմանը մասնակցում էին նաև հասարակական տարբեր կազմակերպությունների, արհմիությունների՝ այդ թվում Հայաստանի պետհիմնարկների արհմիության, ներկայացուցիչներ:

## ՈՐԱԿՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱ

Հայաստանի պետիմնարկների հանրապետական արհմիության նախագահ Ա.Ասատրյանը 2017 թվականի հունվարի 10-11-ը Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելում մասնակցել է «Որակյալ զբաղվածություն և որակյալ հանրային ծառայություններ» թեմայով կոնֆերանսին: Եվրոպայի հանրային ծանրայությունների աշխատողների արհմիությունների դաշնության (ԵՀՕԱԱԴ) կազմակերպած միջոցառմանը մասնակցում էին եվրոպական ավելի քան 120 երկրների շուրջ 300 ներկայացուցիչներ՝ քննարկելու աշխատանքի որակի, դրա սահմանման հետ կապված տարատեսակ խնդիրներ, որոշելու որակյալ աշխատանքի հասնելու համար անհրաժեշտ գործողությունները:

Բացման խոսքում ԵՀՕԱԱԴ գլխավոր քարտուղար Յան Վիլլեմ Գաուդրիասանը ողջունել է այն փաստը, որ եվրոպական ինստիտուտները սկսել են ուշադրության արժանացնել հատկապես աշխատանքի որակի խնդրին՝ օրինակ բերելով այն, որ Եվրոպական Կոմիտեն իր տարեկան զեկույցում երկու անգամ անդրադարձել է աշխատանքի որակի կարևորությանը: Նշված դրական միտումները բանախոսը մասնավորեցրել է Իտալիայի, Իռլանդիայի և Իսպանիայի օրինակներով, որտեղ հանրային ծառայությունների սեկտորը վերադարձել է կոլեկտիվ բանակցությունների գործընթացին և վերստին ձեռք է բերել այն առավելություններն ու վարձատրությունները, որոնք կորցրել էր խիստ խնայողության պարագայում:

Յան Վիլլեմը վստահություն է հայտնել, որ եվրոպական արհմիությունները պետք է բարելավեն աշխատանքի որակը, հանրային ոլորտի ծառայողները պետք է ապահովված լինեն վարձատրության արժանապատիվ աճով, և աշխատավարձերի կրճատումները պետք է վերականգնվեն: Դրա համար հարկավոր է վերջ դնել խնայողական քաղաքականությանը և վերականգնել կոլեկտիվ պայմանագրերը:

Ստորև ներկայացվում է կոնֆերանսում քննարկման արժանացացած կարևորագույն թեմաների ամփոփը:

### ***Որակյալ աշխատանքի սահմանում***

HIVA Leuven համալսարանի գլխավոր հետազոտող Գայ վան Գիսը նկարագրել է այն հիմնական կետերը, որոնց վրա հիմնվում է որակյալ աշխատանքը՝ հենվելով եվրոպական և համաշխարհային տարբեր ցուցանիշների վրա: Նա նշել է, որ եվրոպական մակարդակով զարգացումները կարող են ճանապարհ բացել առաջիկա տարիներին արհմիությունների նախաձեռնությունների համար: Աշխատանքի որակը գնահատելիս պետք է հաշվի առնել բազմաթիվ ցուցանիշներ. սոցիալական բավարար պահովվածությունը և բարձր աշխատավարձը դեռ բավարար պայմաններ չեն, եթե առկա է գերձանբաբեռնվածություն և սթրես:

### ***Եվրոպայի արհմիությունների կոնֆեդերացիայի վարձատրության արշավը***

Վերջին տարիների ընթացքում կոշտ խնայողության քաղաքականությունը բերել է հանրային ծառայության ոլորտի աշխատողների աշխատավարձերի կրճատումների և սառեցման, այդ պատճառով Եվրոպայի արհմիությունների կոնֆեդերացիան (ETUC) 2017 թվականը հայտարարել է «Վարձատրության բարձրացման տարի»: Կոնֆեդերացիան պատրաստվում է ձեռնարկել հսկայական արշավ՝ ուղղված Եվրոպայի աշխատողների աշխատավարձերի բարձրացմանը՝ հիմնավորելով առավել կայուն վերականգնման գործընթացում դրա անհրաժեշտությամբ:

### ***«Անորոշ աշխատանք» (Precarious work)***

Կոնֆերանսի ընթացքում նկարագրվել են «անորոշ աշխատանքի» պայմանները, տրվել են սահմանումներ: Քննարկվեցին աշխատանքային պայմանագրերի, արտաժամյա աշխատանքի, աշխատանքային ծանրաբեռնվածության հետ կապված խնդիրները, բերվել են կոլեկտիվ բանակցությունների և արհմիութենական արշավների օրինակներ՝ եվրոպական տարբեր երկրների փորձից:

Երկօրյա կոնֆերանսը կազմակերպվել էր Եվրոպական Կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

## ՄԻԶԱԶԳԱՑԻՆ ԱՆՑՈՒԴԱՐԶ

### ***6-ժամյա աշխատանքային օրվա արդյունավետությունը ապացուցվել է գիտնականների կողմից***

Շվեդ գիտնականները եկել են այն եզրահանգման, որ օրական 6 ժամ աշխատող աշխատողները ավելի արդյունավետ են աշխատում և ավելի քիչ են հիվանդանում: Հետազոտությունն անցկացվել է շվեդական Գոտեբորգ քաղաքի տարեցների խնամքի կենտրոնում, որի ղեկավարությունը համաձայնություն է տվել 6 ժամյա աշխատանքային գրաֆիկին: Այդպիսով աշխատողները 10%-ով ավելի քիչ են անաշխատունակության թերթիկներ ներկայացնում, և դրանով պայմանավորված՝ տարեցների խնամքին ուղղված միջոցառումների քանակն է ավելացել է՝ հասնելով 85%-ի:

Այդպիսով գործատուն ավելի քիչ է վճարում աշխատողների անաշխատունակության ժամանակահատվածի համար: Միևնույն ժամանակ աշխատաժամանակի կրճատման հաշվին գործատուն հնարավորություն ունի նոր աշխատողներ ընդունել, որոնց բարձր արդյունավետության շնորհիվ լիովին փոխհատուցվում են գործատուի ծախսերը:

### ***Եվրոպական արհմիությունները ուշի ուշով հետևում են առևտրային համաձայնագրերի կնքմանը***

Եվրոպական արհմիությունների ուշադրության կենտրոնում այսօր Եվրոպական Միության և Կանադայի միջև կնքվող ազատ առևտրի և տնտեսական համագործակցության համապարփակ համաձայնագիրն է (CETA): Համաձայնագիրը սահմանում է կառավարությունների և ներդրողների միջև վեճերի լուծման նոր, ավելի լիբերալ մեխանիզմներ, որոնցով պաշտպանվում են կորպորացիաների և խոշոր տնտեսվարողների իրավունքները՝ ի դեմս աշխատողների իրավունքների: Եվրոպական արհմիությունները դեմ են նշված համաձայնագրի վավերացմանը, քանի որ գտնում են, որ այն բացասաբար կանդրադառնա հանրային ծառայությունների որակի, սոցիալական երաշխիքների, հանրային ծառայողների իրավունքների և առհասարակ ժողովրդավարության վրա: Եվրոպայում արհմիությունները կազմակերպել են տասնյակ արշավներ համաձայնագրի դեմ: Մասնավորապես, հանրային ծառայությունների օրը՝ հունիսի 23-ին և առևտրային համաձայնագրերի դեմ զուբալ գործողությունների օրը՝ ապրիլի 18-ին, Եվրոպայի հանրային ծառայությունների արհմիությունների (EPSU) անդամ արհմիությունները կազմակերպել են «Say NO to CETA» արշավը՝ հարյուր հազարավոր մարդկանց դուրս բերելով փողոց, իսկ արհմիութենական ներկայացուցիչները շարունակում են Եվրախորհրդարանում ընդդիմանալ համաձայնագրի վավերացմանը: Առաջիկայում Եվրախորհրդարանում կկայանա համաձայնագրի վավերացման վերաբերյալ որոշիչ քվեարկությունը, մինչդեռ 2017 փետրվարի 23-ին, Լատվիայի պառլամենտը (Սեյմը) վավերացրել է համաձայնագիրը՝ դառնալով այն վավերացնող առաջին երկրներից մեկը:

### ***Վերականգնում, վերածնունդ և առաջընթաց***

Խոսքը Եվրոպայում կոլեկտիվ պայմանագրային գործընթացի մասին է: Եվրոպայի արհմիությունների կոնֆեդերացիայի ղեկավարը ընդգծում է, որ կոլեկտիվ-պայմանագրային կարգավորումը աշխատատեղերում արդյունավետ սոցիալական երկխոսության և ժողովրդավարության հիմքն է. այն կարևորագույն գործիքն է աշխատանքի և տնտեսության օգտին աշխատավարձերի բարձրացման հասնելու համար:

Եվրոպայի գործատու-փորձագետները ևս այն համոզմանն են, որ կոլեկտիվ-պայմանագրային գործընթացի կարգավորումը կարող է Եվրոպայի տնտեսական վերականգնման բանալին լինել:

Եվրոպայի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահն արտահայտվել է կոլեկտիվ-պայմանագրային գործընթացի կարգավորման օգտին, որով աշխատողներն և գործատուները ազատորեն բանակցություններ են վարում, ինչն էլ սոցիալական գործընկերության կարևոր տարրերից է:

### ***ՌԴ արհմիությունները դեմ են արտահայտվել կառավարության նախաձեռնությանը***

Ռուսաստանի անկախ արհմիությունների ֆեդերացիան կտրականապես դեմ է արտահայտվել Ռուսաստանի աշխատանքի նախարարության այն նախաձեռնությանը, որով ավելացվում են գործազուրկների նպաստները: Բանն այն է, որ նշված ավելացումները նախատեսվում են այլ գործազուրկների նպաստների հաշվին, ովքեր երկար ժամանակ կամ ընդհանրապես չեն աշխատել: Ֆեդերացիան այն համոզմանն է, որ մարդիկ չեն աշխատում այն պատճառով, որովհետև չեն կարողանում աշխատանք գտնել, շատ տարածքներում աշխատատեղեր պարզապես չկան, իսկ զբաղվածության ծառայությունը չի աջակցում վերջիններիս աշխատանք գտնելու հարցում: